ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սուրենավան համայնք
Էլ.փոստ՝ surensavan.ararat@mta.gov.am հեռ.041-90-90-99

<< 28 >> ՓԵՏՐՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆ

ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի ԹԻՎ 01 ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով

Ավագանին որոշեց թիվ 01

Հաստատել ՀՀ Արարատի մարզի Սուրենավան համայնքի 2019թվականի փետրվարի 28-ի թիվ 01 նիստի օրակարգը հետևյալ քննարկվող հարցերով :

1.ՀՀ Արարատի մարզի Սուրենավան համայնքի 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 01 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2.ՀՀ Արարատի մարզի Սուրենավան համայնքի ավագանու 21.12.2018 թ. Թիվ 31-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

3.ՀՀ Արարատի մարզի Սուրենավան համայնքի համանքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքի կարգով օտարելու մասին:

4.ՀՀ Արարատի մարզի Սուրենավան համայնքի վարչական տարածքում գտնվող Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով վարձակալությամբ տրամադրելու մասին :

Կողմ- 6 դեմ-0 ձեռնպահ

Հ. Աբրահամյան

Պ. Ադամյան

Կ. Մարտիրոսյան

Գ. Գրիգորյան

Վ.Ղազարյան

Լ.Նադարյան

Համայնքի ղեկավար Կ. Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սուրենավան համայնք
Էլ.փոստ՝ surensavan.ararat@mta.gov.am հեռ.041-90-90-99

<< 28 >> ՓԵՏՐՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆ

ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 31-Ն ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 74 հոդվածով <<Տեղական տուրքերի և վճարների մասին >> օրենքի 9,10,11,12-րդ հոդվածներով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 18 կետի պահանջներով .

Ավագանին որոշեց 02- Ն

1. Սուրենավան համայնքի 21.12.2018 թվականի ավագանու թիվ 31-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ:

1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինություններ (ներառյալ՝ոչ հիմնական շինությունների շինարարության(տեղադրման) (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների ինչպես նաև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000դրամ,

բ. սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

-200-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող շենք շինությունների համար՝30000դրամ,

- 500-ից մինչև1000քմ ընդհանուր մակերես ունեցող շենք շինությունների համար՝ 70000դրամ:

-1000-ից մինչև 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 100000դրամ:

գ. ոչ հիմնական շինությունների համար՝

-մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող շենք շինությունների ի համար՝ 3000դրամ,

- 20և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող շենք շինությունների համար՝5000դրամ:

2) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝շինարարության թույլտվության չպահանջվող դեպքերի) համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով.

ա. չի նախատեսվում կցակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով շենք շինությունների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն 3000դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ստորգետնյա) հետևանքով շենք շինությունների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսված է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այկ կառույցների (այդ թվում՝ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամաբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3)Համայնքի վարչական տարածքում շենքերի և շինությունների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000դրամ:

4)համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար 2019 թվականի համար150.000/ հարյուր հիսուն հազար դրամ/:

5)համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի ,սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի ,մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար 2019 թվականի համար 30.000/ երեսուն հազար դրամ/:

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու համար օրացույցային տարվա համար 50.000 դրամ:

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար ՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝3400/երեք հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ.

-26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 4000/չորս հազար /ՀՀ դրամ:

-50-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում է4700/ չորս հազար յոթ հարյուր/ՀՀ դրամ:

-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 7400/ յոթ հազար չորս հարյուր/ՀՀ դրամ.

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում `15000/ տասնհինգ հազար /ՀՀ դրամ:

-500 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ` 33.000/երեսուներեք հազար /ՀՀ դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար`յուրաքանչյուր եռամսյակի համար`

-մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում `2000 /երկու հազար /ՀՀ դրամ:

-26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ` 4.000/չորս հազար/ ՀՀ դրամ:

-50-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում `4.600/չորս հազար վեց հարյուր/ՀՀ դրամ:

-100-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7.000/ յոթ հազար /ՀՀ դրամ:

-200-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերոս ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ` 15.000/տասնհինգ հազար /ՀՀ դրամ:

-500 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազամակերպման դեպքում `33.000/երեսուներեք հազար /ՀՀ դրամ:

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 120/մեկ հարյուր քսան/ՀՀ դրամ մեկ քառակուսի մետրի համար :

բ/ Հեղուկ վառելիքի , սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ:

9)Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զնարճանքի, շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24^{00} –ից հետո աշխատելու թույլտվության համար `2019 թվականի համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 25000դրամ

բ.հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 50000դրամ

գ. բաղնիքների/սաունաների/ համար՝ 200000դրամ

դ. խաղատների կազմակերպման համար՝ 500000դրամ

ե.շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000դրամ

զ. վիճակախաղերի կազմակերպման համար՝ 75000դրամ

10)Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1քմ տեղական տուրքը սահմանվում է՝

ա.ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 300դրամ

բ.թունդ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 800 դրամ

գ. այլ արտաքին գովազդի համար՝ 300 դրամ

դ. դատարկ գովազդային վահանակների համար՝ 250 դրամ

11)Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար սահմանվում է 2000դրամ:

12) Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվությանհամար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝10000դրամ:

13) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշը, զինանշանը , անվանումը և այլ որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության , աշխատանքների կատարման , ծառայությունների մատուցման գործնթացներում , օրացույցային տարվա համար 50000 դրամ:

14) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար օրացույցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար 10000 դրամ:

15)համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայաությունների իրականացման և (կամ) մատուցման համար 500000 դրամ:

16) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույտվության համար , օրացույցային տարվա համար՝

ա. 3 հա –ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար 2500000 դրամ.

բ. 5 հա –ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատնեի համար 5000000 դրամ .

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար 7000000 դրամ.

դ. 10 հա-ից ավելի մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10000000 դրամ.

1. Օրացույցային տարվա համար ավագանու կողմից սահմանված տեղական վճարների դրույքաչափերը փոփոխության չեն կարող ենթարկվել:

17) Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար 50000 դրամ:

18) 21.12.2018 թվականի թիվ 31-Ն որոշումը համարել չեղյալ :

2. Տեղական վճարների դրույքաչափերը

1) Համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ տեսակները՝

ա. Համայնքի տարածքում շինարարություն կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու , ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000 դրամ :

բ. տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու , հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և

այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000 դրամ :

գ. տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներ վճար՝ 3000 դրամ :

2) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների փոխհատուցման վճարը սահմանել 5000 դրամ:

Կողմ- 6 դեմ-0 ձեռնպահ -0

Հ.Աբրահամյան

Լ.Նադարյան

Գ.Գրիգորյան

Կ. Մարտիրոսյան

Վ. Ղազարյան

Պ.Ադամյան

Համայնքի ղեկավար՝ Կ. Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սուրենավան համայնք
Էլ.փոստ՝ surensavan.ararat@mta.gov.am հեռ.041-90-90-99

<< 28 >> ՓԵՏՐՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆ

ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-Վ ԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի >>67, 68 կետերի պահանջներով.

Ավագանին որոշեց թիվ 03

1.Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը առանձնացնելու և աճուրդ վաճառքի կարգով օտարելու մասին:
1.Լոտ ծածկագիր 03-086-0681-0002 0,0055 հա գյուղ.նշանակության այլ հողատեսք
2.Լոտ ծածկագիր 03-086-0023-0009 0,08736 հա բնակավայրերի այլ հող
2.Օտարվող հողամասերի աճուրդ –վաճառքի մեկնարկային գինը սահմանել հողամասերի կադաստրային արժեքի 100 %-ի չափով :

Կողմ- 6 դեմ-0 ձեռնպահ

Հ. Աբրահամյան

Պ. Ադամյան

Կ. Մարտիրոսյան

Գ. Գրիգորյան

Վ.Ղազարյան

Լ.Նադարյան

Համայնքի ղեկավար՝ Կ. Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սուրենավան համայնք
Էլ.փոստ՝ surensavan.ararat@mta.gov.am հեռ.041-90-90-99

<< 28 >> ՓԵՏՐՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆ

ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի >>67, 68 կետերի պահանջներով.

Ավագանին որոշոց թիվ 04

1.Թույլատրել համայնքի ղեկավարին Սուրենավան համայնքի վարչական սահմաններում գտնվող Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող՝ լոտ ծածկագիր 0151-0004-ից, 0151-0003-ից , 0151-0003-ից համապատասխանաբար 0.49000 հա ,0.5850 հա , 0.3000 հա տրանսպորտի նշանակության հողամասերը առանձնացնելու և մրցույթի կարգով 99 տարով վարձակալությամբ տրամադրելու:

2. Թույլատրել համայնքի ղեկավարին Սուրենավան համայնքի սեփականություն հանդիսացող լոտ ծածկագիր 03-086-0001-0019 0.57 հա գյուղ. նշանակության՝ խաղողի այգին և լոտ ծածկագիր 03-086-0256-ից 2.8845 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը գնման նախապատվության իրավունքով տրամադրել վարձակալությամբ:

3.Մրցույթով տրամադրված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի կադաստրային արժեքի 50 տոկոսի վճարման դեպքում վարձակալած հողամասերը ուղակի կարգով վաճառել վարձակալներին:

4.Վարձավճարը սահմանել հողամասի զուտ եկամուտի 22 տոկոսի չափով :

Կողմ- 6 դեմ-0 ձեռնպահ

Հ. Աբրահամյան

Պ. Ադամյան

Կ. Մարտիրոսյան

Գ. Գրիգորյան

Վ.Ղազարյան

Լ.Նադարյան

Համայնքի ղեկավար՝ Կ. Կարապետյան